5ԲՅԲ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 112-25

Նախաձեռնող՝ ***«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ***
Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Երկրաբանների փ. 7

Գործունեությունը՝ ***Անգեղակոթ բնակավայրում դպրոցի կառուցում***
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 112-25

«07» մայիսի 2025թ.

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Անգեղակոթ բնակավայր

Ներածական մաս. «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից՝ փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Անգեղակոթ բնակավայրում կառուցել դպրոց:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Քաղաքաշինության կոմիտեի պատվերով՝ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում, տարածքի ռելիեֆը հարթ է, փոքր թեքությամբ:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ տարածքում ստորգետնյա ջրերը մինչև 10.0 մետր խորության վրա՝ բացակայում են: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները, որոնք կարող են ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Դպրոցը նախատեսվում է կառուցել 300 տեղ հզորությամբ, որը կունենա 4 հիմնական մասնաշենք: Դպրոցի շենքը կունենա 1 նկուղային՝ 2.7 մ բարձրությամբ և 3 վերգետնյա հարկ՝ 3.3 մետր բարձրությամբ՝ 15.5x29 մ առանցքային չափերով: Դպրոցի կենտրոնական մասում կլինեն լաբորատորիաներ, ուսումնական սենյակներ և անհատական պարապմունքների դասարաններ, տնօրենի սենյակ՝ ընդունարանով, ուսուցչանոց, ուսմասվարի սենյակ: Դպրոցը կունենա լայն և լուսավոր միջանցքներ, ռեկրեացիոն գոտի, երկու կողմերից կլինեն աստիճանավանդակներ՝ դեպի դուրս ելքով, կլինեն սանհանգույցներ աշակերտների, ուսուցիչների և սակավաշարժ խմբի երեխաների համար, ռազմագիտության սենյակ՝ զինանոցով: Սակավաշարժ խմբի երեխաների համար նախատեսված է նաև վերելակ:

Երկրորդ մասնաշենքը, որը մեծ սրահով և կենտրոնական աստիճաններով կցված կլինի ուսումնական մասնաշենքերին՝ կլինի գլխավոր մուտքի և սպասարկման մասնաշենք: Այն կլինի երկհարկանի՝ նկուղային հարկով: Մասնաշենքը կունենա 18.0x21.7 մ առանցքային չափեր: Այս մասնաշենքի առաջին հարկում կլինեն գլխավոր աստիճանները՝ գլխավոր սրահով, որը մի կողմից կցված կլինի ուսումնական մասնաշենքի կենտրոնական սրահին, իսկ մյուս կողմից հանդիսությունների և մարզական դահլիճների մասնաշենքին: Առաջին հարկում կլինի ճաշարանը՝ իր խոհանոցով, պահեստներով և սննդի ստացման կետով: Երկրորդ հարկում կլինեն դպրոցի թանգարանը և գրադարանը՝ գրապահոցով: Մասնաշենքի նկուղային հարկում կլինեն ճաշարանի օդափոխության ներածման և արտածման ագրեգատները:

Երրորդ մասնաշենքը, որը կցվելու է գլխավոր մուտքին և սպասարկման մասնաշենքին՝ լինելու է հանդիսությունների և մարզական դահլիճների մասնաշենքը, որը կունենա 42x30 մ առանցքային չափեր: Այստեղ տեղավորված կլինեն աստիճանավանդակը, ընդհանուր սանհանգույցը, բուժկետը՝ մեկուսարանով, իսկ աջ հատվածում կլինի մարզիչի սենյակը և հանդերձարանները, սանհանգույցներ և այլն: Երրորդ մասնաշենքը կենտրոնական հատվածում կունենա 6 մ լայնությամբ սրահ, որը մարզադահլիճը կբաժանի հանդիսությունների դահլիճից: Մարզադահլիճը կունենա 24x18 մ, իսկ հանդիսությունների դահլիճը՝ 18x18 մ առանցքային չափեր: Նախատեսված է նաև պարասրահ՝ հանդերձարանով և սանհանգույցներով, տեխնիկական և օժանդակ սենյակներ և այլն:

Նկուղային հարկը կունենա 1.8 մ բարձրություն, որտեղ տեղադրված կլինեն դահլիճների ներածման և արտածման օդափոխության համակարգերը:

Բոլոր մասնաշենքերը հագեցած կլինեն ինժեներական և տեխնիկական ժամանակակից սարքավորումներով: Կառուցվող դպրոցի ջրամիացումը նախատեսվում է գործող Ø150 մմ տրամաչափի ջրագծից, իսկ տաք ջրամատակարարման սնուցումը՝ կաթսայատնից՝ Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե խողովակով:

Դպրոցի ջերմամատակարարումը նախատեսվում է իրականացնել գազով, իսկ էլեկտրամատակարարումը՝ շին. աշխատանքների ժամանակ՝ գործող դպրոցից, շահագործման ընթացքում՝ նոր կառուցվող ենթակայանից:

Դպրոցի կոյուղու համակարգի ներքին ցանցի համար նախատեսված են D50 մմ և D110 մմ, պոլիվինիլքլորիդային (PVC) ТУ 21-26-100-80 տեսակի խողովակներ:

Նախատեսվում է նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակներ՝ 110 Կվտ հզորության:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1. Հողամասի մակերեսը՝ 35041.95 մ² (100 %),
2. Կառուցապատման մակերեսը՝ 2964.00 մ² (8.46 %),
3. Ճանապարհներ և սալվածքներ՝ 3279.15 մ² (9.36 %),
4. Սիզամարգեր և կանաչ տնկիներ՝ 27874.75 մ² (79.55 %),
5. Մարզադաշտի մակերես՝ 924 մ² (2.64 %):

Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ, որից հանույթը կկազմի 9441.53 խմ, հետլիցքը՝ 1417.72 խմ: Մնացած 8023.81 խմ հողային զանգվածն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման աշխատանքների շրջանակում կտնկվի տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականություն:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն բեռնման, փորման, հարթեցման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, վառելիքի արտանետումների, ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինությունների ծածկում անթափանց թաղանթով՝ համապատասխան բարձրությամբ և այլն:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում: Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով, աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան՝ 25 խմ ծավալով տարողություն, որի ծավալն ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը

կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Անգեղակոթ բնակավայրի գերեզմաններին կից՝ սանիտարապաշտպան գոտու սահմաններում, պատվիրատուի (Քաղաքաշինության կոմիտե) կողմից մշակվել են որոշակի միջոցառումներ բացասական հետևանքները նվազեցնելու համար, որոնցից են՝ նոր դպրոցի հողամասի սահմանագծով, գերեզմաններին հարող տարածքում, անթափանց մետաղական 4 մ բարձրությամբ պաշտպանիչ էկրանների տեղադրում, հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածներում ծառատունկի իրականացում՝ բարդիների երկշարք տնկում մինիմալ թույլատրելի հեռավորությամբ:

Նախատեսվող դպրոցի բացարձակ նիշը գերեզմանների ամենացածր դիտակետից գտնվում է հարաբերական 3–10 մ ցածր բարձրության վրա, ինչը կնպաստի աշակերտների կողմից դասապրոցեսի ժամանակ վիզուալ մակարդակում անտեսանելի դարձնել գերազմանների տեսարանը:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է.

- բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,
- շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից,
- հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել,
- անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը
- Դպրոցի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ պետք է տեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, բացառել մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները: Այդ նպատակով նախատեսվում է.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է հանրային լսումներ:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, Սիսիանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սիսիանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Նոր դպրոցի հողամասի սահմանագծով, գերեզմաններին հարող տարածքում՝ իրականացնել անթափանց մետաղական 4 մ բարձրությամբ պաշտպանիչ հյուսների տեղադրում, հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածներում բարդիների երկշարք տնկում՝ մինիմալ թույլատրելի հեռավորությամբ, որն ամրագրված է հաշվետվության մեջ:

5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան